ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ն ՀՀ ՇՄ ՀԲՄԱՇՁԲ 2022/01-1

ք. Գյումրի «27» դեկտեմբերի 2021 թ.

ՀՀ Շիրակի մարզպետարանը, ի դեմս ՀՀ Շիրակի մարզպետ Ն. Բաղդասարյանի, որը գործում է ՀՀ Շիրակի մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աշոցքի ԱՏՃ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Կարապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Շիրակի մարզի մարզային նշանակության ավտոմոբիկային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման համապատասխան կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը,

գ) կատարողը երկու անգամ անընդմեջ թույլ է տալիս ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով նախատեսված խախտումները և դրանք չի վերացնում նույն աղյուսակում նշված ժամկետում:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է, Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը՝ յուրաքանչյուր ամիս՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը, Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման 42-րդ կոտով սահմանված փաստաթղթերը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2022 թվականի համար կազմում է 81 050 400.0 (ութսունմեկ միլիոն հիսուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում՝

1–ին չափաբաժին – ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի մարզային նշանակության ավտոմոբիկային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ 45 904 400.0 (քառասունհինգ միլիոն ինն հարյուր չորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2–րդ չափաբաժին – ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանի մարզային նշանակության ավտոմոբիկային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ 35 146 000.0 (երեսունհինգ միլիոն հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը գործոնային է և կարող է փոփոխվել կախված սպասարկվող ճանապարհների երկարության, ճանապարհների վիճակի, ճանապարհների պահպանման մակարդակի փոփոխության հետ, բացի այդ յուրաքանչյուր տարի կողմերի համաձայնությամբ պայմանագրի արժեքի

կարող է վերանայվել կախված նախորդ տարվա պաշտոնապես հրապարակված միջին գնաճից՝ տվյալ տարվա համար նախատեսված հատկացումների շրջանակներում:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով նախատեսված յուրաքանչյուր թերության վերացման համար սահմանված ժամկետի խախտման համար գանձվում է տուգանք նույն հավելվածի 4-րդ աղյուսակով սահմանված չափով և տույժ՝ թերության վերացման համար 3-րդ աղյուսակում սահմանված ժամկետի ուշացված յուրաքանչյուր օրվա համար՝ սպասարկվող ճանապարհահատվածի 1 կմ արժեքի 0.05 տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով, պայմանագրի տեխնիկական առաջադրանքով նախատեսված այլ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման յուրաքանչյուր դեպքի համար գանձվում է տուգանք տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի գումարի 0.5 տոկոսի չափով, իսկ ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Աշխատանքների առնվազն (70) տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1,1, N 1,2, N 1,3, N 1,4, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

2023 և հաջորդող տարիներին աշխատանքներ կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեցվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	«Աշոցքի ԱՏՃ» ՓԲԸ
ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Գ. Նժդեհ 16	ՀՀ Շիրակի մարզ գ. Աշոցք
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառ. վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ «Գյումրի» մ/ճ
Հ/Հ 900211207023, ՀՎՀՀ 05507437	Հ/Հ 2472600053990000, ՀՎՀՀ 06300041
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«27» դեկտեմբերի 2021 թ. կնքված
ՀՀ ՇՄ ՀԲՄԱՇՁԲ 2022/01-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	կատարման	
						հացեն	ժամկետը
1.	45231176/501	ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի մարզային նշանակության ավտոմոբիկային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ	դրամ	45904400.0	1	Համաձայն բնութագրի	Պայման ագրի հիման վրա կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:
2.	45231176/502	ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանի մարզային նշանակության ավտոմոբիկային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ	դրամ	35146000.0	1		

Ընդհանուր պահանջներ Չափաբաժին 1-ինի և 2-րդի համար

Մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները կատարողն իրականացնում է ապահովելով ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջները, ինչպես նաև սպասարկման աշխատանքների կատարման ոլորտին առնչվող այլ իրավական ակտերի, շինարարական նորմերի, ստանդարտների պահանաջները:

Պայմանագրի գործողության ողջ ընթացքում կատարողը պարտավոր է ապահովել ավտոմոբիլային ճանապարհների, ճանապարհային կահավորանքի պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկված ժամանակ տրանսպորտի շուրջօրյա անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:

Ավտոմոբիլային ճանապարհների, առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների ընթացիկ պահպանման աշխատանքների ընթացքում երթևեկության կազմակերպման անվտանգության բարելավման նպատակով կատարողը պատասխանատուի հանձնարարությամբ, տեղադրում է լրացուցիչ կահավորանքի միջոցներ:

Ավտոմոբիլային ճանապարհների երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով կատարողը բնակավայրերից դուրս գտնվող հատվածներում իրականացնում են նաև գլխավոր ճանապարհի հետ հատվող երկրորդական ճանապարհների վրա՝ մինչև 50 մ երկարությամբ հատվածում տեղադրված ճանապարհային նշանների պահպանման աշխատանքները՝ երթևեկության անվտանգության պահանջներին համապատասխան:

Ասֆալտբետոնե պատվածքով ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման ընթացքում կատարողը պարտավոր է նաև՝

- Ճանապարհների կոնստրուկտիվ տարրերի և երթևեկամասերում թույլ չտալ աղբի, ձյան և սառույցի առկայություն

- Ձյան առատ տեղումների ընթացքում թույլ չտալ 5 սմ-ից ավել շերտի գոյացում: Ուժեղ ձնաբքերի դադարելուց անմիջապես հետո սկսել և ոչ ավելի քան 4 ժամվա ընթացքում ավարտել ճանապարհների մաքրումը
- Մերկասառույցի դեմ պայքարի համար ժամանակին կիրառել աղի և ավազի ցանումը
- Աշխատանքների կատարման ընթացքում ապահովել երթևեկության անվտանգությունը
- Առատ ձյան տեղումների և ուժեղ ձնաբքերի ժամանակ, ճանապարհների մաքրման տեխնիկապես անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում, ճանապարհների փակումն ու բացումը կատարել Պատվիրատուի և ավտոտեսչության տեղական մարմինների համաձայնությամբ
- Ստեղծել շուրջօրյա հերթապահություն, վարել տվյալների գրանցման մատյան և ամեն օր, ժամը 6-8-ը, 12-14-ը և 18-20-ը Պատվիրատուի հերթապահությանը տվյալներ հայտնել, տեղում եղանակի ու ճանապարհների վիճակի մասին: Եղանակային պայմանների կտրուկ փոփոխության դեպքում պարբերաբար տեղեկացնել ճանապարհների վիճակի մասին:
- Սպասարկվող ավտոճանապարհների տարածքում ունենալ առնվազն մեկ ստացիոնար հենակետ՝ ապահոված հոսանքով, կապի միջոցներով բանվորների և մեխանիզատորների համար ջեռուցվող հանգստյան սենյակով:

Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

Ընթացիկ ամառային («ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» ժամանակահատված) պահպանման ընթացքում կապալառուն պարտավոր է նաև՝

- Ճանապարհների պահպանության և երթևեկության անվտանգության պահանջների համաձայն ապահովել սպասարկվող ավտոճանապարհների հետևյալ կոնստրուկտիվ տարրերի պահպանվածությունը՝
  - Հողային պաստառ և օտարման շերտ
  - Երթևեկելի մաս
  - Արհեստական կառույցներ
  - Կահավորանք և անվտանգության էլեմենտներ, այդ թվում մետաղական արգելափակոցներ
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների կարգի 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

Պայմանագրի գործողության ողջ ընթացքում կապալառուն պետք է ապահովվի Կարգի 53-րդ կետի աղյուսակում նշված՝ ստորև թվարկված մեքենա-սարքավորումների քանակին, տեսակին, կահավորանքին ներկայացվող պահանջները, ինչպես նաև ապահովվի նշված մեքենա-սարքավորումների 70 տոկոսը սեփականության իրավունքով տնօրինելու պահանջը:

Կապալի պայմանագրի գործողության ողջ ընթացքում Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները իրականացնելու համար անհրաժեշտ մեքենա-սարքավորումներն են՝

N	Անվանումը	Պահանջվող քանակը	Սեփականության ձևը
1	2	3	4
1	Գրեյդեր կամ այլ ձյունմաքրիչ մեքենա (ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակահատվածի համար), կահավորված ռետինե պաշտպանիչ շեղբով ու փոշեցիրով և գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS):	Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: Նվազագույնը՝ ընթացիկ ձմեռային պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 40 կմ և յուրաքանչյուր հաջորդ 21-40 կմ համար - 1 միավոր	Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված
2	Կոմբինացված ճանապարհային մեքենա (ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակահատվածի	Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով:	Սեփական կամ վարձակալած կամ անհատույց

	համար), կահավորված ձյունամաքրիչ սարքավորմամբ՝ վերազինված ռետինե պաշտպանիչ շեղբով և փոշեցիրով, աղավազային խառնուրդի շաղացիր սարքավորմամբ և գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS):	Նվազագույնը՝ ընթացիկ ձմեռային պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 40 կմ և յուրաքանչյուր հաջորդ 21-40 կմ համար - 1 միավոր	օգտագործման հանձնված
3	Ինքնաթափ բեռնատար մեքենա, կահավորված գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS):	Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: Նվազագույնը՝ պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 30 կմ և յուրաքանչյուր հաջորդ 16-30 կմ համար - 1 միավոր	Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված
4	Ամբարձիչ	Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: Նվազագույնը՝ պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 100 կմ և յուրաքանչյուր հաջորդ 51-100 կմ համար -1 միավոր	Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված
5	Կոմպրեսոր	Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: Նվազագույնը՝ պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 50 կմ և յուրաքանչյուր հաջորդ 26-50 կմ համար - 1 միավոր	Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված
6	Գլդոն (> 5 տ)	Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: Նվազագույնը՝ պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 50 կմ և յուրաքանչյուր հաջորդ 26-50 կմ համար - 1 միավոր	Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված
7	Գրեյդեր (ընթացիկ ամառային պահպանման ժամանակահատվածի համար), կահավորված գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS):	Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: Նվազագույնը՝ ընթացիկ ամառային պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 60 կմ և յուրաքանչյուր հաջորդ 31-60 կմ համար - 1 միավոր	Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Շիրակի մարզպետարան
ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Գ. Նժդեհ 16
ՀՀ ՖՆ աշխատակազմի գլխավոր. վարչություն
Հ/Հ 900211207023, ՀՎՀՀ 05507437

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Աշոցքի ԱՏՃ» ՓԲԸ
ՀՀ Շիրակի մարզ գ. Աշոցք
«Վիդիշինբանկ» ՓԲԸ «Գյումրի» մ/ճ
Հ/Հ 247260006899000, ՀՎՀՀ 06300041

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1-1
«27» դեկտեմբերի 2021 թ. կնքված
ՀՀ ՇՄ ՀԲՄԱՇՁԲ 2022/01-1 ծածկագրով պայմանագրի

Չափաբաժին 1

ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի մարզային նշանակության ավտոմոբիկային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ

Պ/Ն	Ավտոճանապարհի անվանումը	Երկարությունը /կմ/	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Պահպանման հատվածների երկարություն ըստ գնահատման /կմ/	Ճանապարհահատվածների վիճակի ծածկագիրը	Պահպանման պահանջվող մակարդակը	Պահպանման հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Միավորի գինը /հազ դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջան									
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ									
S-7-2	Բյուրակն (S-7-37) - Մեղրաշատ - Ողջի (S-7-37)	9,90	S – IV	7.0 կմ (կմ 0+000 - կմ 7+000)		բավարար	7,00	770	5390,000
S-7-3	Ալվար (S-7-65) -/Հ-66/ (Աղվորիկ)	4,80	S – IV	3.5 կմ (կմ 0+000 - կմ 3+500)		բավարար	3,50	770	2695,000
S-7-6	/Հ-32/ - Բանդիվան - Կրասար -/Մ-1/ (Աշոցք)	13,00	S – IV	3.0 կմ (կմ 0+000 - կմ 3+000)		բավարար	3,00	770	2310,000
S-7-7	Ջրաձոր - /Հ-32/	6,70	S – IV	2.0 կմ (կմ 0+000 - կմ 2+000)		բավարար	2,00	770	1540,000
S-7-8	/S-7-37/ - Գտաշեն - Կամխուտ - /S-7-37/	9,10	S – IV	7,0 կմ (կմ 0+000 - կմ 7+000)		բավարար	7,00	770	5390,000
S-7-36	Երիզակ (S-7-65) - Ձառիշատ - /S-7-65/	4,20	S – IV	2.0կմ (կմ 0+000 - կմ 2+000)		բավարար	2,00	770	1540,000
S-7-37	/Հ-32/ - Բյուրակն - Հայկավան (S-7-17)	14,50	S – IV	13.5կմ (կմ 0+000 - կմ 13+500)		բավարար	13,00	770	10010,000
S-7-38	/Հ-32/ - Արեգնադեմ	1,20	S – IV	1.,2 կմ (կմ 0+000 - կմ 1+200)		բավարար	1,20	770	923,000
S-7-64	/Հ-66/ (Գառնառիճ) - Եղնաջուր - Ամառանոցներ	11,60	S – IV	3.0 կմ (կմ 0+000 - կմ 3+000)		բավարար	3,00	770	2310,000
S-7-65	Հեղեղատ - Երիզակ - Ալվար - Արավետ - Մեծ Սեպասար - /Մ-1/	24,70	S – IV	7.0 կմ (կմ 6+000 - կմ 13+000)		բավարար	7,00	770	5390,000
Ընդամենը		99,70		48,70			48,70		37498,000

Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ									
S-7-37	/Հ-32/ - Բյուրակն - Հայկավան (S-7-17)	14,50	S – IV	10.0կմ (կմ 1+000 - կմ 11+000)	ՏԲ - (II)	բավարար	10,00	745	7450,000
S-7-38	/Հ-32/ - Արեգնադեմ	1,20	S – IV	1, 2կմ (կմ 0+000 - կմ 1+200)	ՏԲ - (II)	բավարար	1,20	745	894,000
Ընդամենը		15,70		11,20			11,20		8344,000
Ընդհանուրը		115,40		59,90			59,90		45843,000

Մետաղական արգելափակոցների պահպանում

Տարածաշրջանի անվանումը	Ընդհանուր երկարությունը 1000 գծ/մ	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջան	0.050	1248.0	62,400
Ընդամենը մետաղական արգելափակոցբերի պահպանում			62,400
Ամբողջը ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջան /ձմեռ, ամառ և մետաղական արգելափակոց/			45904,400
Ամբողջը /տառերով/ 45 904 400.0 (քառասունհինգ միլիոն ինն հարյուր չորս հազար չորս հարյուր)			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Շիրակի մարզպետարան
ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Գ. Նժդեհ 16
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառ. վարչություն
Հ/Հ 900211207023, ՀՎՀՀ 05507437

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Աշոցքի ԱՏՃ» ՓԲԸ
ՀՀ Շիրակի մարզ գ. Աշոցք
«Արդշինբանկ» ՓԲԸ «Գյումրի» մ/ճ
Հ/Հ 24726000539900000, ՀՎՀՀ 06300041

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 1-2
«27» դեկտեմբերի 2021 թ. կնքված
ՀՀ ՇՄ ՀԲՄԱՇՁԲ 2022/01-1 ծածկագրով պայմանագրի

II-IV տեխնիկական կարգի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման արժեքի գնագոյացում
(Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ- ԱՇՈՒՆ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (դրամ)			
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1.0 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1.0 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1.0 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Թույլատրելի պահպանման մակարդակի դեպքում՝ 1.0 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)
Երաշխիքային ՏԵ	545000.0	×	×	×
Լավ ՏԼ	859000.0	713000.0	×	×
Բավարար ՏԲ	×	868000.0	745000.0	×
Վատ ՏՎ	×	×	×	776000.0

Ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման արժեքի գնագոյացում

Ավտոճանապարհների կարգերը	Տարվա կտրվածքով (դրամ)		
	Լավ սպասարկման մակարդակի դեպքում՝ 1.0 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Միջին սպասարկման մակարդակի դեպքում՝ 1.0 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Բավարար սպասարկման մակարդակի դեպքում՝ 1.0 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)
II-IV տեխնիկական կարգի մարզային նշանակության ավտոճանապարհներ	920000.0	828000.0	770000.0

Մետաղական արգելափակոցների պահպանման արժեքի գնագոյացում

Տարածաշրջանի անվանումը	1000 գմ մետաղական արգելափակոցների պահպանման արժեքը (դրամ)
ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջան	1248000.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Շիրակի մարզպետարան
ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Գ. Նժդեհ 16
ՀՀՄՄ աշխատակազմի գործառ. վարչություն
Հ/Հ 900211207023, ՀՎՀՀ 05507437

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Աշոցքի ԱՏՇ» ՓԲԸ
ՀՀ Շիրակի մարզ գ. Աշոցք
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Գյումրի» մ/ճ
Հ/Հ 2472600053990000, ՀՎՀՀ 06300041

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 1–3
«27» դեկտեմբերի 2021 թ. կնքված
ՀՀ ՇՄ ՀԲՄԱՇՁԲ 2022/01–1 ծածկագրով պայմանագրի

Չափաբաժին 2

ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանի մարզային նշանակության ավտոմոբիկային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ

Պ/Ն	Ավտոճանապարհի անվանումը	երկարությունը /կմ/	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Պահպանման հատվածների երկարություն ըստ գնահատման /կմ/	Ճանապարհահատվածների վիճակի ծածկագիրը	Պահպանման պահանջվող մակարդակը	Պահպանման հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Միավորի գինը /հազ դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջան									
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ									
S-7-1	/Մ-1/ - Սիզավետ	2,00	S – IV	2.0 կմ (կմ 0+000-կմ 2+000)		բավարար	2,00	770	1540,000
S-7-6	/Հ-32/ - Բանդիվան - Կրասար -/Մ-1/(Աշոցք)	13,00	S – IV	3.5 կմ(կմ 9+500-կմ 13+000)		բավարար	3,50	770	2695,000
S-7-10	/Մ-1/ - Ղազանչի	1,20	S – IV	1.2 կմ (կմ 0+000-կմ 1+200)		բավարար	1,20	770	924,000
S-7-11	/Մ-1/ - Արփենի	3,50	S – IV	3,5 կմ (կմ 0+000-կմ 3+500)		բավարար	3,50	770	2695,000
S-7-34	/Հ-32/ - Հողմիկ - Գոգհովիտ -/Մ-1/	10,80	S – IV	6.5կմ (կմ 4+300-կմ 10+800)		բավարար	6,50	770	5005,000
S-7-35	/Մ-1/ - Թորոսգյուղ - Լեռնագյուղ - /Հ-68/	7,80	S – IV	7.0 կմ (կմ 0+000-կմ 7+000)		բավարար	7,00	770	5390,000
S-7-39	/Մ-1/ - Կարմրավան	1,00	S – IV	1.0 կմ (կմ 0+000-կմ 1+000)		բավարար	1,00	770	770,000
S-7-40	/Մ-1/ - Ցողամարգ	1,10	S – IV	1.1 կմ (կմ 0+000-կմ 1+100)		բավարար	1,10	770	847,000
S-7-59	/Մ-1/ - Զույգաղբյուր - Հարթաշեն - /Հ-31/	5,70	S – IV	3,0 կմ (կմ 2+700-կմ 5+700)		բավարար	3,00	770	2310,000
S-7-60	/Հ-68/ - Սարապատ	2,00	S – IV	2.0կմ (կմ 0+000-կմ 2+000)		բավարար	2,00	770	1540,000
S-7-61	/Հ-68/ - Ձորաշեն	1,80	S – IV	1.8 կմ (կմ0+000-կմ 1+800)		բավարար	1,80	770	1386,000
S-7-65	Հեղեղատ - Երիզակ - Ալվար - Արավետ - Մեծ Սեպասար - /Մ-1/	24,70	S – IV	5,0կմ (կմ19+700-կմ24+700)		բավարար	5,00	770	3850,000
S-7-68	/Մ-1/ (Բավրա) - Սարագյուղ	3,40	S – IV	3.4կմ (կմ 0+000-կմ 3+400)		բավարար	3,40	770	2618,000
Ընդամենը		78,00		41,00			41,00		31570,000

Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ									
S-7-34	/Հ-32/ - Հողմիկ - Գոգհովիտ -/Մ-1/	10,80	S – IV	4.8 կմ(կմ 6+000-կմ10+800)	ՏԲ - (II)	բավարար	4,80	745	3576,000
Ընդամենը		10,80		4,80			4,80		3576,000
Ընդհանուրը		88,80		45,80			45,80		35146,000

Մետաղական արգելափակոցների պահպանում

Տարածաշրջանի անվանումը	Ընդհանուր երկարությունը 1000 գմ/	Միավորիգինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջան	0.000	1248.0	0.0.
Ընդամենը մետաղական արգելափակոցբերի պահպանում			0.0
Ամբողջը ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջան /ձմեռ, ամառ և մետաղական արգելափակոց/			35146,000
Ամբողջը /տառերով/ 35 146 000.0 (երեսունհինգ միլիոն հարյուր քառասունվեց հազար)			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Շիրակի մարզպետարան
ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Գ. Նժդեհ 16
ՀՀ ՖՆ աշխատակազմի գլխավոր. վարչություն
Հ/Հ 900211207023, ՀՎՀՀ 05507437

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Աշոցքի ԱՏՃ» ՓԲԸ
ՀՀ Շիրակի մարզ գ. Աշոցք
«Արդշինբանկ» ՓԲԸ «Գյումրի» մ/ճ
Հ/Հ 24726000539990000, ՀՎՀՀ 06300041

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 1-4
«27» դեկտեմբերի 2021 թ. կնքված
ՀՀ ՇՄ ՀԲՄԱՇՁԲ 2022/01-1 ծածկագրով պայմանագրի

II-IV տեխնիկական կարգի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման արժեքի գնագոյացում
(Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ- ԱՇՈՒՆ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (դրամ)			
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1.0 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1.0 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1.0 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Թույլատրելի պահպանման մակարդակի դեպքում՝ 1.0 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)
Երաշխիքային ՏԵ	545000.0	×	×	×
Լավ ՏԼ	859000.0	713000.0	×	×
Բավարար ՏԲ	×	868000.0	745000.0	×
Վատ ՏՎ	×	×	×	776000.0

Ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման արժեքի գնագոյացում

Ավտոճանապարհների կարգերը	Տարվա կտրվածքով (դրամ)		
	Լավ սպասարկման մակարդակի դեպքում՝ 1.0 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Միջին սպասարկման մակարդակի դեպքում՝ 1.0 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Բավարար սպասարկման մակարդակի դեպքում՝ 1.0 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)
II-IV տեխնիկական կարգի մարզային նշանակության ավտոճանապարհներ	920000.0	828000.0	770000.0

Մետաղական արգելափակոցների պահպանման արժեքի գնագոյացում

Տարածաշրջանի անվանումը	1000 գմ մետաղական արգելափակոցների պահպանման արժեքը (դրամ)
ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջան	1248000.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Շիրակի մարզպետարան
ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Գ. Նժդեհ 16
ՀՀ ՖՆ աշխատակազմի գանձառ. վարչություն
ՀՎՀՀ 90021207023, ՀՎՀՀ 05507437

Կ.Տ

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Աշոցքի ԱՏՁ» ՓԲԸ
ՀՀ Շիրակի մարզ գ. Աշոցք
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Գյումրի» մ/ճ
Հ/Հ 24726000539900000, ՀՎՀՀ 06300041

Կ.Տ

(ստորագրություն)

Հավելված N 2
«27» դեկտեմբերի 2021 թ. կնքված
ՀՀ ՇՄ ՀԲՄԱՇՁԲ 2022/01-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231176 /501	ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի մարզային նշանակության ավտոմոբիկային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ	– –	– –	– –	– –	– –	– –	– –	– –	– –	– –	– –	45904,40	45904,40
2	45231176 /502	ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանի մարզային նշանակության ավտոմոբիկային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ	– –	– –	– –	– –	– –	– –	– –	– –	– –	– –	– –	35146,00	35146,00
		Ընդհանուրը	– –	– –	– –	– –	– –	– –	– –	– –	– –	– –	– –	81050,40	81050,40

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:
Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Գ. Նժդեհ 16 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառ. վարչություն հ/հ 900211207023, ՀՎՀՀ 05507437 (ստորագրություն) Կ.Տ	«Աշոցքի ԱՏՃ» ՓԲԸ ՀՀ Շիրակի մարզ գ. Աշոցք «Արոշինբանկ» ՓԲԸ «Գյումրի» մ/ճ հ/հ 24726000536990000, ՀՎՀՀ 06300041 (ստորագրություն) Կ.Տ

Հավելված 3
«27» դեկտեմբերի 2021 թ. կնքված
ՀՀ ՇՄ ՀԲՄԱՇՁԲ 2022/01-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«27» դեկտեմբերի 2021 թ. կնքված
ՀՀ ՇՄ ՀԲՄԱՇՁԲ 2022/01-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն